ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/41

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7944-2019 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի 08.05.2019թ. թիվ 1/2341-19 գրության հիման վրա, 15.05.2019թ. «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ ազգային ժողովի աշխատակազմը 08.05.2019թ. թիվ 1/2341-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից համակարգչային սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Մովսեսյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից 15.04.2019թ. ժամը 12:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 Արձանագրության (կցվում է) 6-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերությունը 8-րդ և 9-րդ չափաբաժինների (Դինամիկ օպերատիվ հիշողություն) մասով հայտարարվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 18-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության

չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցմանն (կցվում է) ի պատասխան ստացված տեղեկատվությունը (կցվում է), համաձայն որի՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ գնահատող հանձնաժողովը 25.04.2019թ. ժամը 12:30-ին տեղի ունեցած նիստի N3 Արձանագրության 3.2 կետով որոշում է կայացրել՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով մերժել, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել նշված չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ին:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջներով, կից ներկայացրել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տալու համար:

3. <u>«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.05.2019թ. գրությամբ դիմել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7944-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«07.04.2019թ.-ին ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ ազգային ժողովի (այսուհետ՝ Գնահատող կամ Պատվիրատու) կողմից հայտարարված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով: Մինչև հայտը ներկայացնելը, ՄՈՎԵՍՅԱՆ ՍՊԸ-ն Taxservice.am կայքի միջոցով դիտել և համոզվել է, որ 07.04.2019թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 0 ՀՀ դրամ:

Հայտը ներկայացնելու օրվա՝ 07.04.2019թ. դրությամբ՝ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ կողմից գնային առաջարկ է ներկայացվել 1,8,9,10,11,16,17 չափաբաժինների համար, իսկ գնային առաջարկում ներառված բոլոր յոթ չափաբաժինների ընդհանուր գումարը կազմել է 1,399,520 ՀՀ դրամ: Միաժամանակ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն հայտով հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ունի տվյալ գնման գործընթացի մասնակցության իրավունք, ինչպես նաև՝ բավարարում է նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված, հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին:

16.04.2019թ.-ին Գնահատողը ԷՓ միջոցով տեղեկացրել է, որ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, որոնց համար գնային առաջարկ է ներկայացվել համապատասխանաբար՝ 624,000 և 58,650 ՀՀ դրամ: Նույն օրը, ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն Գնահատողին է ուղարկել հրավերով նախատեսված հ. 6, և 6.1 հավելվածները, լրացված և վավերացված:

03.05.2019թ.-ին Գնահատողից էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է գրություն, առ այն, որ քանի որ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, և հիմք ընդունելով

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ և 47-րդ կետերի պահանջները, հանձնաժողովի որոշմամբ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի հայտը 9-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

Նշված գրության բովանդակությանը ծանոթանալուց հետո, կապնվելով հարկային մարմնի հետ, պարզել ենք, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի ժամկետանց պարտավորությունը կազմել է 1,400 ՀՀ դրամ, որը արտացոլված չի եղել Taxservice.am էլեկտրոնային կայքի «հարկային պարտավորություններ» բաժնում, քանի որ վերաբերվում է ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցվող 1,000 դրամներին (դրոշմանիշային վճարներ), որոնց վերաբերյալ տվյալները նախկինում չեն արտացոլվել ոչ թղթային և ոչ էլ էլեկտրոնային քաղվածքներում: Նշված պարտավորությունը գոյացել է 2017թ. նոյեմբեր ամսից սկսած, սակայն չի արտացոլվել Taxservice.am կայքի միջոցով ստացված հարկային պարտավորությունների վերաբերյալ տվյալներում, ինչի հետևանքով ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն սխալ տվյալ է ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն չունենալու մասին, իսկ 2018թ. ընթացքում հարկային մարմնից թղթային եղանակով առձեռն ստացված տեղեկանքներում նշված պարտավորության վերաբերյալ տեղեկություն եղած չլինելու հետևանքով՝ Taxservice.am կայքից ստացված վերջին տեղեկատվությունը համարել է արժանահավատ:

Այնուհետև, կապնվել ենք ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի քարտուղար Ալինա Գրիգորյանի հետ, և նրա ուշադրությունը հրավիրել այն իրողության վրա, որ 1,400 ՀՀ դրամ կազմող ժամկետանց պարտավորությունը չի գերազանցում ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնային առաջարկի 1 տոկոսը, այլ կազմում է գնային առաջարկի 0,10 տոկոսը, և միաժամանակ չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը, ուստի և ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ հայտը ենթակա չէ մերժման: Ի պատասխան ասվածին, մեզ տեղեկացրել են, որ հայտերի գնահատումը իրականացվում է առանձին չափաբաժինների մասով, իսկ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի գնային առաջարկը 9-րդ չափաբաժնի մասով առանձին գերազանցել է առկա ժամկետանց հարկային պարտավորության օրենքով սահմանված շեմը, ինչի արդյունքում Գնահատողը եկել է այն անհիմն եզրահանգմանը, որ մեր կազմակերպության հայտը ենթակա է մերժման: Այլ կերպ ասած՝ ՄՈՎԵՍՅԱՆ ՍՊԸ-ի հայտը գնահատվել է յուրաքանչյուր առանձին չափաբաժնի գնային առաջարկը համեմատելով հարկային մարմնից ստացված տվյալի հետ, ինչի

արդյունքում ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ հայտը մերժվել է, իսկ 9-րդ չափաբաժնի մասով ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Գնահատողի ներկայացուցիչ Ալինա Գրիգորյանը իր մոտեցումը հիմնավորվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի պահանջներով, նշելով, որ այդ նորմերի նմանատիպ մեկնաբանությունը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարության մեթոդաբանության ստորաբաժանման կողմից, և որ իրենք հիմնվելով ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց կարծիքի վրա, մշտապես միայն նման մեթոդով են գնահատում մասնակիցների հայտերը՝ հարկային մարմնից ստացված ժամկետանց պարտավորության մասին տվյալը համեմատելով առանձին չափաբաժնի գնային առաջարկի հետ:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ հայտը մերժելու մասին որոշման իրավաչափության վերաբերյալ անհամաձայնությունը, Ձեզ եմ ներկայազնում գնահատող հանձնաժողովի հիշյալ որոշման անհիմն և ոչ իրավաչափ լինելու մասին իրավական հիմնավորումները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրեքնի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

«…գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.»,

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի

«գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: …»

Մեջբերված նորմերի և նկարագրված իրողությունների համակցման արդյունքում ստացվում է, որ՝

1. գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

2. գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների,

3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն իր հայտը ներկայացրել է առանձին չափաբաժիններով, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց պարտավորության հետ առանձին-առանձին համեմատելիս ստացվում է, որ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ հայտը ենթակա է մերժման, իսկ գնային առաջարկի բոլոր չափաբաժինների հանրագումարի համեմատության դեպքում՝ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի հայտը ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է նախ պարզել թե արդյոք գնահատող հանձնաժողովը ՄՈՎԵՍՅԱՆ ՍՊԸ-ի գնային առաջարկը հարկային մարմնից ստացված օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորության մասին տվյալը պետք է համեմատեր բոլոր չափաբաժինների հանրագումարի հետ, թե՝ առանձին-առանձին՝ ըստ չափաբաժինների: Ելնելով նշված անհրաժեշտությունից, հարկ է անդրադառնալ քննարկվող իրավահարաբերության կարգավորմանը կոչված նորմերին և բացահայտել դրանց պահանջը:

Այսպես. մասնակցի գնային առաջարկը կոմիտեից ստացված օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորության մասին տվյալի հետ համեմատական գնահատման ճիշտ եղանակը պարզելու համար, նախ՝ անհրաժեշտ է իրավահարաբերության կարգավորմանը կոչված նորմերի բովանդակությունը մեկնաբանել օրենքով սահմանված կարգով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, որպեսզի բացահայտվեն դրանք ընդունող մարմնի նպատակը և որպես արդյունք՝ բացահայտվեն այդ նորմերի իմաստը և պահանջը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է նորմատիվ իրավական ակտերի նորմերի մեկնաբանելու հետևյալ ձևը՝

«Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական

ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:»

Ղեկավարվելով նորմերի մեկնաբանման կանոնները սահմանող օրենքի պահանջներով, հարկ է պարզել թե ինչ նպատակ է ունեցել օրենսդիրը գնումների գործընթացին օրենքով սահմանված շեմը գերազանցեող ժամկետանց պարտավորություն ունեցող անձանց վերաբերյալ նորմը ընդունելիս:

Այսպես. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հաշվառմամբ մեկնաբանելիս, ստացվում է, որ տվյալ նորմը ընդունելիս օրենսդիրը նպատակ է ունենեցել սահմանել ժամկետանց պարտավորության շեմը և այդ շեմը գերազանցող պարտավորությունների առկայության հիմքով գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց հստակ շրջանակը, որոնք են՝

1. հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իրենց գնային առաջարկի մեկ տոկոսից ավելի ժամկետանց պարտավորություններ ունեցողները,

2. հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հիսուն հազար դրամից ավել ժամկետանց հարկային պարտավորություններ ունեցողները:

Նաև հիշյալ շրջանակի անձանց գնումների գործընթացին մասնակցելու դեպքերի բացահայտման և այդ անձանց մասնակցության սահմանափակման նպատակով, օրենսդիրը, միաժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանել է որ՝

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»

Վերոգրյալից հետևում է, որ գնահատող հանձնաժողովը հայտերը պետք է գնահատի բացառապես հրավերով սահմանված կարգով, ինչը մասնակցին հնարավորություն կտա կանխատեսել հրավերի շրջանակներում իր ստանձնած պարտավորությունների և կատարած գործողությունների կամ անգործության իրավական հետևանքները: Ասվածը հաստատվում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով «Հայտ» հասկացության հստակ սահմանումը՝ «հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ», ինչից նաև հետևում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իմաստով՝ «հայտ» հասկացությունը

անհրաժեշտ է ընկալել որպես հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ՝ մասնակցի կողմից ներկայացված հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերի ամբողջականություն, այլ ոչ թե՝ մասնակցի կողմից առանձին չափաբաժնի համար նրեկայացված գնային առաջարկ:

Օրենսդիրը սահմանելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց հստակ շրջանակը, միաժամանակ, հայտերի մերժման այլ հիմքերի հետ մեկտեղ, սահմանել է նաև հրավերի 7.15 կետով նախատեսված հայտի մերժման հետևյալ հիմքը՝ «…Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:»

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ եթե մասնակիցը իր հայտով ժամկետանց հարկային պարտավորություն չունենալու հիմքով տվյալ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունենալու մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություն է հայտնել՝ ապա նրա հայտը (հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկը) ենթակա է մերժման ոչ թե մասնակի (մեկ կամ մի քանի չափաբաժնի մասով), այլ՝ ամբողջությամբ (բոլոր չափաբաժինների մասով): Հետևաբար՝ եթե հանձնաժողովը, սխալ մեկնաբանելով օրենքի պահանջը, օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասով մասնակցի գնային առաջարկը գնահատի ըստ առանձին չափաբաժինների, և այդ համեմատության արդյունքում պարզվի որ մեկից ավել չափաբաժինների համար գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը թեկուզև մեկ չափաբաժնի մասով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, ապա՝ այդ դեպքում ևս, մասնակցի հայտը, որը ներառում է նաև այլ չափաբաժինների վերաբերյալ գնային առաջարկները և դրավերով սահմանված այլ փաստաթղթերը ենթակա է մերժման ամբողջովին՝ բոլոր չափաբաժինների մասով:

Եթե գնահատող հանձնաժողովը, սխալ մեկնաբանելով օրենքի պահանջը, օրենքով նախատեսված շեմը գերազանցող հարկային պարտավորություն ունենալու մասով, մասնակցի հայտը գնահատի ոչ թե ըստ ներկայացված գնային առաջարկի ընդհանուր հանրագումարի, այլ ըստ առանձին չափաբաժինների, և մեկ չափաբաժնի մասով մերժի մասնակցի «հայտը», իսկ մյուս չափաբաժնի մասով նրա հետ կնքի պայմանագիր, ապա

կխախտվի նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձի հետ պայմանագիր կնքելու արգելքը, քանի որ այդ դեպքում՝ կստացվի որ մի կողմից մասնակիցը ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, և հետևաբար՝ իրավունք չուներ մասնակցելու գնման գործընթացին, սակայն մյուս կողմից նրա հետ կնքվել է պայմանագիր քանի որ մեկ այլ չափաբաժնի մասով նա ունեցել է գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք: Նշված իրավիճակը կարող է վրա հասնել միայն Գնահատողի կողմից օրենսդրության պահանջը սխալ մեկնաբանելու և մասնակցի գնային առաջարկը հարկային մարմնից ստացված տվյալի հետ առանձին չափաբաժիններով համեմատելու դեպքում: Այսպիսով պարզ է դառնում, որ Գնահատողի այն մոտեցումը, ըստ որի մասնակցի գնային առաջարկը ըստ չափաբաժինների պետք է համեմատվի հարկային մարմնից ստացված տվյալի հետ՝ չի բխում օրենքի պահանջից և օրենքի նորմի սխալ մեկնաբանության, օրենքի իմաստն ու նպատակը ճիշտ չընկալելու արդյունք է:

Գնահատողի կողմից օրենքի պահանջը սխալ ընկալելու, մեկնաբանելու և կիրառելու մասին է վկայում նաև հայտի էության և դրա գնահատման վերաբերյալ օրենքի կարգավորման թյուրըմբռնումը, ինչը արտահայտվում է Գնահատողի կողմից օրենքով սահմանված «Հայտ» սահմանման սխալ ընկալման հետևանքով, հայտի էությունից չբխող գնահատման սկզբունքների կիրառմամբ: Քանի որ օրենքը հստակ սահմանել է, որ հայտը դա՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է, այլ կերպ ասած՝ հրավերով պահանջված, մասնակցի ներկայացրած բոլոր փաստաթղթերի ամբողջականությունն է, հետևաբար՝ հայտը մերժան կամ բավարար գնահատման ենթակա է ամբողջությամբ, այլ ոչ մասնակի, ըստ չափաբաժինների: Ասվածից հետևում է, որ հայտի այնպիսի գնահատումը, որպիսի գնահատման արդյունքում հայտը կարող է մասնակի մերժվել և մասնակի բավարար գնահատվել, չի բխում հայտի գնահատման օրենսդրական նպատակից, քանի որ չի ապահովի այդ նպատակի իրականացումը: Ասվածից հետևում է նաև, որ հայտերի գնահատումը կարող է իրականացվել միայն այնպիսի եղանակով, որ գնահատման արդյունքում հայտը կամ ամբողջովին կմերժվի կամ ամբողջությամբ կգնահատվի բավարար: Ուստի և, ու քանի որ հայտում առկա առանձին չափաբաժինների համեմատական գնահատումը կոմիտեից ստացված տվյալի հետ չի կարող ապահովել հայտի ամբողջական մերժման կամ բավարար գնահատման օրենսդրական նպատակի կատարումը, հետևաբար՝ հայտի և կոմիտեից ստացված տվյալի համեմատական

գնահատումը պետք է իրականացվի այնպես՝ որ ապահովվի օրենքով սահմանված հայտի գնահատում կոչվող նպատակի վրա հասնելը՝ հայտում առկա բոլոր չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարը, որպես միասնական տվյալ, պետք է համեմատվի հարկային մարմնից ստացված տվյալի հետ:

Վերոգրյալը բացառում է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների գնահատման նպատակով մասնակցի գնային առաջարկը ոչ թե միասնական, այլ առանձին՝ ըստ չափաբաժինների գնահատելու ողջամիտ տրամաբանությունը և իրավաչափությունը, քանի որ եթե առանձին չափաբաժինների համար գնային առաջարկները հարկային մարմնից ստացված տվյալի հետ առանձին-առանձին համեմատվեն ու գնահատվեն, ապա կարող է ստացվել, որ մի կողմից՝ առանձին չափաբաժնի մասով մասնակցի գնային առաջարկը բավարարում է հրավերով սահմանված պայմաններին և ենթակա չէ մերժման, իսկ մյուս կողմից, մեկ այլ չափաբաժնի մասով՝ նույն մասնակցի գնային առաջարկը չի բավարարում հրավերով սահմանված պայմաններին և ենթակա է մերժման: Արդյունքում՝ մեկ կամ մի քանի չափաբաժնի մասով հրավերով սահմանված պահանջները չբավարարող մասնակցի հետ կկնքվի պայմանագիր, ինչը տրամագծորեն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակին, բովանդակությանը, տրամաբանությանը և հրավերի 7.15 կետով սահմանված՝ իրականությանը չհամապատասխանով տեղեկատվություն ներկայացված լինելու հիմքով հայտերը մերժելու պահանջներին:

Ինչ վերաբերվում է գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակիցների որոշումն ըստ առանձին չափաբաժինների իրականացնելու վերաբերյալ հրավերի 7.20 կետով սահմանված պահանջին, ապա, այդ կարգավորումը սահմանող նորմի պահանջը ճիշտ բացահայտելու համար նպատակահարմար է ևս մեկ անգամ անդրադառնալ դրա բովանդակությանը՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի՝

«գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: …»

Նորմի բովանդակությունից բխում է, որ նորմը ընդունողը նպատակ ունենալով սահմանել գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպելու դեպքում հայտերի գնհատման և ընտրված մասնակցի որոշման ձևը, տառացիորեն սահմանել է, որ՝ հայտերի

գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Հատկանշական է, որ օրենսդիրը հայտերի գնահատում և ընտրված մասնակիցների որոշում հասկացությունները միավորել է «և» շաղկապով, ինչից հետևում է, որ այդ հասկացությունները տվյալ նորմի պահանջի բացահայտման համատեքստում անհրաժեշտ է դիտարկել փոխկապակցված՝ որպես նորմի սահմանման միասնական նպատակ: Սրանից հետևում է, որ տվյալ նորմի իմաստով՝ հայտերի ըստ առանձին չափաբաժինների գնահատումը իրականացվում է ընտրված մասնակցին որոշելու նպատակով: Այլ կերպ ասած՝ տվյալ նորմի նպատակը՝ հայտերը ըստ առանձին չափաբաժինների գնահատելու միջոցով ընտրված մասնակցի որոշումն է:

Արդյոք հայտերի գնահատումը և ընտրված մասնակիցների որոշումը ըստ առանձին չափաբաժինների իրականացնելու վերաբերյալ նորմը կոչված է նաև հարկային մարմնից ստացված՝ մասնակցի օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն ունենալու մասին տվյալի ու վերջինիս հայտի համեմատական գնահատման միջոցով գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակցին որոշելու համար, թե՝ ոչ, և արդյոք ընտրված մասինակցին որոշելու համար անհրաժեշտ է հարկային մարմնից ստացված՝ ժամետանց պարտավորություն ունենալու մասին տվյալի գնահատումը, թե՝ ոչ: Նշված հարցերին պատասխանելու համար անհրաշեշտ է նախ պարզել ընտրված մասնակցի որոշման եղանակը: Ընտրված մասնակցին որոշելու եղանակը պարզելու նպատակով, նախ անհրաժեշտ է հստակ հասկանալ թե օրենքը ինչպիսի անհրաժեշտ և բավարար հատկանիշներ ու պայմաններ է սահմանել ընտրված մասնակցին որոշելու համար, և ինչպես է ձևակերպել ընտրված մասնակից հասկացությունը:

Սկսենք այնտեղից, որտեղ տրված է «Ընտրված մասինակից» հասկացության սկզբնական սահմանումը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից, որով սահմանված է՝

«ընտրված մասնակից՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.»:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, սահմանված է, որ՝ գնումների հայտարարությունը պետք է պարունակի ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշների վերաբերյալ տեղեկությունները: Այդ տեղեկությունները և չափանիշները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրեքնի 6-րդ հոդվածի 3-րդ մասով հետևյալ կերպ՝

«Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:»

Քննարկվող խնդրի շրջանակում, հարկ է մասնավորապես անդրադառնալ «Ֆինանսական միջոցներ» կոչված չափանիշին, որի էությունն ու հատկանիշները բացահայտվում են այդ չափանիշի գնահատման կարգը սահմանող նորմի՝ Կարգի 63-րդ կետի բովանդակությամբ, ըստ որի՝

«... «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ ... մասնակիցը, ... հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

...

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»

Ուսումնասիրելով ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվող չափանիշները, և մասնավորապես՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը և դրա էությունը, պարզ է դառնում, որ ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշների շարքում օրենսդիրը չի նախատեսել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու վերաբերյալ չափանիշ, սակայն, միաժամանակ՝ օրենքով նախատեսված շեմը գերազանցող պարտավորություն ունեցող անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի սահմանափակում է նախատեսել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասի 1-ին կետի 2-րդ կետով ըստ որի՝

«... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ ... որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.»:

Այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի նորմերի վերլուծության արդյունքում, պարզ է դառնում, որ օրենսդիրը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց և մրցույթին մասնակցող որակավորման չափանիշները չբավարարող անձանց դիտարկել է որպես տարբեր իրավական կարգավիճակների կրողների, մի դեպքում՝ որպես որակավորման չափանիշներին չբավարարող սուբյեկտներ, իսկ մյուս դեպքում՝ որպես գնման գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող սուբյեկտներ:

Նշված կարգավիճակների տարբերակված սահմանման օբյեկտիվ անհրաժեշտությունը բխում է նախ և առաջ այդ կարգավիճակներին բնորոշ առանձնահատկություններից, որոնց հաշվառմամբ էլ օրենսդիրը սահմանել է այդ կարգավիճակների առանձնացված որակման անհրաժեշտությունը:

Ասվածից հետևում է, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակից սուբյեկտների կարգավիճակը որոշելու նպատակով, հայտերի գնահատումը ենթադրում է տարբեր տվյալների վրա հիմնված գնահատում՝ սուբյեկտների կողմից հայտով ներկայացված մասնակցության իրավունք ունենալու մասին հայտարարությունը (հրավերի հավելված 2) համեմատումը հարկային մարմնից ստացված ժամկետանց պարտավորության վերաբերյալ տվյալի հետ, և որակավորման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ հայտարարությունը (հրավերի հավելված 3)՝ հարկային մարմնից ստացված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի վերաբերյալ տվյալի հետ տարբերակված և առանձնացված համեմատման միջոցով: Ընդ որում, հրավերի հ2 հավելվածով մասնակցի կողմից ներկայացվող մասնակցության իրավունք ունենալու մասին հայտարարությունը տարածվում է ոչ թե առանձին-առանձին չափաբաժինների վրա, այլ գնման գործընթացում ներառված բոլոր չափաբաժինների վրա միասին վերցված, քանի որ մասնակիցի կողմից մասնակցության իրավունք ունենալու մասին հայտարարությունը վերաբերվում է «գնման ընթացակարգ» կոչվող փաստաթղթային և ընթացակարգային ամբողջականությանը:

Վերոգրյալից մարզ է դառնում, որ մասնակիցը կարող է բավարարել որակավորման չափանիշները, սակայն միաժամանակ չբավարարել մասնակցության իրավունքի չափանիշները և հակառակը՝ չբավարարել որակավորման չափանիշները, սակայն ունենալ մասնակցության իրավունք:

Հիմք ընդունելով նաև Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը, և 44-րդ կետը, որոնք պարունակում են կարավորումներ այն մասին, որ սահմանված ժամկետից ուշ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքված լինելու դեպքում ժամկետանց պարտավորության վերաբերյալ ստացված տեղեկատվությունը չի կարող մասնակցի հայտը մերժելու հիմք հանդիսանալ, իսկ սահմանված ժամկետում, կամ սահմանված ժամկետից ուշ, բայց մինչև ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելը ժամկետանց պարտավորության մասին տվյալ ստացված լինելու դեպքում՝ ընտրված մասնակցի հայտը ենթակա է մերժման, ուստի և պարզ է դառնում, որ օրենքը հարկային մարմնից ստացված ժամկետանց պարտավորություն չունենալու մասին տվյալը չի դիտարկում որպես ընտրված մասնակցին որոշելու անհրաժեշտ պայման, այլ դիտարկել է որպես բավարար պայման: Հետևաբար՝ առանձին չափաբաժիններով հայտերի գնահատման վերաբերյալ նորմը կոչված չէ հարկային մարցնից ստացված ժամկետանց պարտավորթության մասին տվյալի և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած տվյալի համեմատական գնահատման միջովով՝ ընտրված մասնակցին որոշելու համար, այլ կոչված է մասնակիցների ներկայացրած հայտերը ըստ չափաբաժինների, գների մասով՝ մասնակիցների գների համեմատմանը միմյանց հետ և նախահաշվային գների հետ, և առանձին չափաբաժինների տեխնիկական բնութագրերի մասով՝ հրավերով նախատեսված առանձին չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հետ համեմատական գնահատման միջոցով ընտրված մասնակիցներին որոշելու համար:

Հայտերի գնահատման նիստի արդյունքում որակավորման չափանիշներին չբավարարելու և գնման գործնթացին մասնակցելու իրավունք չունենալու իրավական կարգավիճակների առանձին որակումը և այդ կարգավիճակների կրողների նկատմամբ տարբեր ընթացակարգերի ու տարբեր իրավական հետևանքների նախատեսումը սահմանված է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերով, նորքոշարադրյալ նորմատիվ կարգավորումներով.

«43. Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ ...

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

(ընդ որում, մինչև 5մլն դրամ կազմող հրավերների դեպքում՝ հարկային մարմնից հարցումը իրականացվում է միայն ժամկետանց հարկային պարտավորությունների մասով, իսկ «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով հարցում չի իրականացվում) ...

44. ... Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

45. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերնի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ

տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում: ...

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին: ...»

Քննարկվող տեղեկությունների տարբերակված դիտարկման և գնահատման անհրաժեշտության մասին պահանջը բացահայտվում է նաև Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետում կիրառված «ինչպես նաև» շաղկապի կիրառմամբ, որի կիրառումը ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:»:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում Գնահատողը ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, օրենսդիրը իրավացիորեն անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն է սահմանել միայն «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության մասով, և միաժամանակ չի նախատեսել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների «շտկման» հնարավորություն, քանի որ հետին ամսաթվով ժամկետանց պարտավորության «շտկելը» անհնարին է օբյեկտիվ պատճառներով: Այդ մասին է վկայում Կարգի 44-րդ կետում «կամ» շաղկապով բաժանված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չբավարարելու մասին պայմանները որպես առանձին-առանձին հայտի մերժման հիմք սահմանված լինելը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Գնահատողը անհամապատասխանությունը շտկելու մասին ծանուցում պետք է ուղարկի միայն «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի վերաբերյալ անհամապատասխանության ի հայտ գալու դեպքում: Մասնակցի կողմից «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի շտկելու դեպքում, մասնակցի

հայտը գնահատվում է բավարար, իսկ չշտկելու դեպքում՝ հայտը մերժվում է, և ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, ըստ որի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու (պարտավորությունը խախտելը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը) օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Քանի որ նույն իրավական ակտի իմաստով որակավորման չափանիշներին չբավարարելը և գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունենալը դիտարկվում են որպես մասնակցի տարբեր հնարավոր իրավական կարգավիճակներ, և հաշվի առնելով նաև որ, Կարգի 44-րդ կետում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով սահմանված շեմը գերազանցող պարտավորություն ունենալու և հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները չբավարարելու մասին պայմանները բաժանված են «կամ» շաղկապով, ինչը ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի մեկնաբանվում է որպես՝ նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմանների առկայության պարտադիր չլինելու պայման, ուստի և պարզ է դառնում, որ Գնահատողը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ և հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ առանձին և տարբերակված տեղեկությունները պետք է դիտարկի արպես տարբեր նշանակություն ունեցող տեղեկություններ և գնահատի յուրաքանչյուրն ըստ իր նշանակության:

Ինչ վերաբերվում է հարկային մարմնից ստացված օրենքով նախատեսված շեմը գերազանցող պարտավորության վերաբերյալ տվյալի «շտկմանը», ապա տվյալ դեպքում, օրենսդիրը նախատեսել է, որ այն ոչ թե պետք է «շտկվի», այլ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը՝ ողջամիտ ժամկետ է սահմանել, որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենա, Գնահատողի հարցման արդյունքում հարկային մարմնից իրականությանը չհամապատասխանող տվյալ ստացված լինելու դեպքում՝ հարկային մարմնից ստանա և հանձնաժողովին ներկայացնի կամ հարկային մարմինն ինքը հանձնաժողովին ներկայացնի նոր տեղեկատվություն, և արդյունքում մասնակցի հայտը

չպետք է մերժվի: Իսկ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորության մասին տվյալը Գնահատողի կողմից հաստատված որակվելու դեպքում, անկախ այն հանգամանքից թե հայտը ներկայացնողը ինչ ժամկետում կմարի այդ պարտավորությունը, հայտը ենթակա է մերժման, իսկ մասնակցի վերաբերյալ տվյալները ենթական են ուղարկման լիազորմ մարմնին:

Այլ բան է, եթե հայտերի գնահատման և ընտրված մասնակիցներին որոշելու միասնական պահանջից ելնելով, մասնակցի հայտը ըստ առանձին չափաբաժինների գնահատելու և արդյունքում՝ ընտրված մասնակցին որոշելու կարգավորմանը կոչված նորմը իրավացիորեն դիտարկենք, որպես այդպիսին: Ըստ այդմ՝ չափաբաժիններին վերաբերվող մասով ընտրված մասնակցին որոշելու նպատակով իրականացվող համեմատական գնահատումը պետք է իրականացվի ըստ չափաբաժինների, իսկ հայտի ընդահնուր մասին վերաբերվող մասով՝ պետք է համեմատական գնահատման ենթարկվեն հայտի բոլոր չափաբաժիններին վերաբերվող տվյալները, այդ թվում՝ ժամկետանց պարտավորության մասին տվյալը: Այլ կերպ ասած՝ մասնակցի ներկայացրած ըստ չաբափաժինների հայտի գնահատումը պետք է իրականացվի այմպես, որ հնարավոր լինի համադրել այլ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների, նախահաշվային գների, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի հետ, իսկ մասնակցի ներկայացրած այն տվյալները, որոնք համադրելի չեն ըստ առանձին չափաբաժինների մասով գնային առաջարկների և տեխնիկական բնութագրերի հետ, ենթակա չեն համադրված գնահատման:

Այսքանով, ելնելով վերը շարադրվածից և հաշվի առնելով օրենքով նախատեսված ժամկետանց պարտավորության առավելագույն շեմի սահմանման նպատակը՝ որը կոչված է ոչ թե ձևական, անտրամաբանական ու ինքնանպատակ ընթացակարգեր սահմանելուն այլ կոչված է գնումների գործընթացներում միայն ժամկետանց պարտավորության ցածր շեմ ունեցող՝ բարեխիղջ հարկատուների մասնակցությունը թույլատրելուն, գալիս ենք այն եզրահանգմանը, որ օրենքի տրամաբանությամբ չի կարող հիմնավորվել այն անտրամաբանական իրավիճակը, երբ օրինակ մասնակիցը, ունենալով 48,000 դրամ ժամկետանց հարկային պարտավորություն և միևնույն ընթացակարգի շրջանակում գնային առաջարկ ներկայացնելով 30 հատ 80,000 և մեկ հատ 2,400,000 դրամ արժողությամբ չափաբաժինների համար, ընտրված մասնակից ճանաչվի միայն 2,400,000 դրամ արժողությամբ չափաբաժնի մասով, իսկ 80,000 դրամանոց չափաբաժնի մասով նրա ներկայացրած բոլոր երեսուն «հայտերը» մերժվեն, քանի որ դրանք առանձին-առնաձին

48,000 դրամ կազմող ժամկետանց հարկային պարտավորության հետ այսպես ասած՝ «գնահատելու» արդյունքում կազմել են դրանց 60 տոկոսը, ուստի և՝ «ենթակա են մերժման»:

Կանխատեսելով Գնահատողի կողմից իր վարքագիծը արդարացնելու նպատակով օրենքի հետագա անտրամաբանական մեկնաբանությունները, և դրանց շարունակության հնարավոր ուղղությունը, հարկ եմ համարում նաև շեշտել, որ Գնահատողը հարկային մարմնից ստացված ժամկետանց պարտավորության մասին տվյալը իրավասու չեր համեմատել նաև ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի կողմից 1-ին տեղ զբաղեցրած միայն 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկի մասով, որոնց գումարը կազմել է 682,650 ՀՀ դրամ, քանի որ օրենքը հստակ, պարզ ու միանշանակ սահմանել է, որ հարկային պարտավորությունները չպետք է գերազանցեն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը կամ հիսուն հազար դրամը, իսկ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն իր հայտը ներկայացրել է 07.04.2019թ. որում գնային առաջարկը 07.04.2019թ. օրվա դրությամբ կազմել է 1,399,520 ՀՀ դրամ, իսկ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել հայտերի բացումից՝ 08.04.2019թ.-ից հետո: Այսինքն՝ 1-ին տեղ զբաղեցրած չափաբաժինների մասով կազմող 682,650 ՀՀ դրամը, որը կազմում է գնային առաջարկի մի մասը, և ենթակա չէ 08.04.2019թ. դրությամբ հարկային պարտավորության հետ համեմատման և գնահատման, քանի որ այդ գումարը չի համապատասխանում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներկայացված գնային առաջարկին:

Ինչ վերաբերվում է օրենքի այնպիսի մեկնաբանությանը, ըստ որի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից յուրաքանչյուր առանձին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկ հարկային մարմնից ստացված տվյալի հետ պետք է համեմատվի որպես առանձին գնային առաջարկ, ապա նման մեկնաբանության անհիմն և սխալ լինելը ամբողջովին հիմնավորված է վերը շարադրված հիմնավորումներով:

Այսքանով պարզ է դառնում, որ մասնակցի հայտը ըստ առանձին չափաբաժինների գնահատման մասին օրենսդրական կարգավորումը կոչված չէ հարկային մարմնից ստացված տվյալները մասնակցի կողմից ներկայացված առանձին չափաբաժինների գնային առաջարկի հետ համեմատական գնահատման միջոցով հայտի մերժման կամ բավարարմանը: Հետևաբար՝ Գնահատողը ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի հայտը մերժելիս չի կիրառել այն նորմը, որը պետք է կիրառեր, այլ կիրառել է այն նորմը, որը չպետք է կիրառեր:

Վերոգրյալ ամբողջից հետևում է, որ Գնահատողի կողմից, որպես ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմք վկայակոչված ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ սահմանված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի նորմը նախատեսված չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հարկային մարմնից ստացված տեղեկության հետ համեմատելիս յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին-առանձին գնահատման կարգ սահմանելու համար, այլ կոչված է բոլոր մասնակիցների գնային առաջարկները իրար հետ և նախահաշվային գների հետ ըստ չափաբաժինների համեմատելու համար:

Այսպիսով, հիմնավորվում է այն հստակ ձևակերպված օրենսդրական պահանջը, որ մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության համեմատական գնահատումը պետք է իրականացի մասնակցի ներկայացված գնային առաջարկի բոլոր չափաբաժինների հանրագումարը համեմատելով հարկային մարմնից ստացված տվյալի հետ և ոչ առանձին-առանձին չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկների հետ:»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Բողոքներ քննող անձին խնդրել են՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) համակարգչային սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների 07.04.2019թ..-ին հայտ է ներկայացրել նաև «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ թիվ 8-րդ և 9-րդ չափաբաժինների (Դինամիկ օպերատիվ հիշողություն) մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նշված ընկերությունը:

15.04.2019թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում է ներկայացրել

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա (այն է՝ 07.04.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նշված հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեի կողմից 18.04.2019թ. տրամադրվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը, այն է՝ գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան 50 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 1 400 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 25.04.2019թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժել է վերոհիշյալ ընկերության կողմից ներկայացված 9-րդ չափաբաժնի մասով հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է որոշել ներկայացնել նշված չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 07.04.2019թ. դրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից 21.05.2019թ. տրված թիվ 730 տեղեկանքի համաձայն՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ն 07.04.2019թ. դրությամբ ունի 1 400 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարների գծով պարտավորություններ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7944-2019 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Ազգային ժողովի կողմից համակարգչային սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգի արդյունքում «Մովսեսյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 15.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (07.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 1 400 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Մասնակիցը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Մովսեսյան» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (07.04.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2019թ. թիվ 26/26-1/7944-2019 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**